

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական
համալսարանի ռեկտոր, ՊՐՈՖԵՍՈՐ ՌՈՒԲԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

[Handwritten signature]
Մայիսի 2020թ.

Կարծիք

Սոնա Արայի Գուլյանի «Տուրիզմի դիսկուրսի լեզվական և արտալեզվական
առանձնահատկությունները անգլալեզու կայքերում» Ժ. 02. 07

«Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ներկա ատենախոսությունը նվիրված է ժամանակակից տուրիզմի անգլալեզու
դիսկուրսի ուսումնասիրությանը: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել
տուրիզմի անգլալեզու դիսկուրսը, վերլուծել տուրիստական կայքերում գետեղված
Մեծ Բրիտանիան և Հայաստանը ներկայացնող առևտրային և ոչ առևտրային
խոսքային և պատկերային տեքստերը, բացահայտել դրանց նշանակությունն ու
դրանց կողմից իրացվող գործառույթները:

Ատենախոսության մեջ հետազոտվող և վերլուծվող փաստական նյութն
ընդգրկում է անգլալեզու ուղեցույցներում, տուրիստական, ինչպես նաև
սոցիալական կայքերում ու բլոգներում գետեղված՝ Հայաստանն ու Մեծ
Բրիտանիան ներկայացնող խոսքային և պատկերային տեքստերը:

Ատենախոսն իր առջև դրել է խնդիր. ուսումնասիրել տուրիզմի դիսկուրսը
որպես խոսքային նոր դրսևորում:

Միջգիտակարգային ուսումնասիրությունները ժամանակակից գիտության
պահանջն են և ապահովում են վերջինիս բնականոն զարգացումը: Այս
հանգամանքով է պայմանավորված ներկա ատենախոսության
արդիականությունը: Աշխատանքի նորույթը պայմանավորված է նրանով, որ
ուսումնասիրվող նյութը ենթարկվել է քննության կորպուսային վերլուծության
առցանց գործիքի կիրառությամբ, ինչպես նաև հեղինակի կողմից ստեղծվել են

փոքրածավալ կորպուսներ, որոնք վերլուծվել և համեմատվել են English Web 2015 (enTenTen15) կորպուսի հետ: Աշխատանքում առաջին անգամ է կատարվում տուրիզմի դիսկուրսի և պատմամշակութային, ազգագրական իրողությունների առնչությունների, լեզվառճական դրսևորումների ուսումնասիրություն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները, վերլուծության կիրառված մեթոդը, հիմնավորվում են կատարված հետազոտության արդիականությունն ու նորույթը, տեսական ու գործնական արժեքները:

Ատենախոսության տեսական առաջին գլուխը՝ «Տուրիզմի դիսկուրսի ուսումնասիրության տեսաքննական նախադրյալները», նվիրված է տուրիզմի դիսկուրսի՝ որպես գիտակարգի ձևավորմանն ու ուսումնասիրությանը: Կարևորվել են դասական և ժամանակակից տեսական մոտեցումները, հաշվի են առնվել խոսքային, արտալեզվական և գուտ լեզվական բազմաթիվ գործոնների առնչությունները: Տուրիզմի դիսկուրսում կարևոր տեղ են գրավում ոչ միայն տուրիստական ոճատարբերակիչ միավոր-տերմինները, այլև նշանային համակարգերը: Ըստ ատենախոսի տուրիզմի դիսկուրսի հետազոտության գործում կարևոր տեղ են գրավում տուրիստական կայքերում պոստենցիալ գնորդի վրա ներազդման լեզվական և արտալեզվական միջոցների ուսումնասիրությունը, տուրիզմի ոլորտում լեզվական և արտալեզվական փոփոխությունների ուսումնասիրությունը, տուրիզմի մասնագիտական լեզվում նոր բառերի և տերմինների ստեղծման ու ամրագրման գործընթացի ուսումնասիրությունը, պատկերային միջոցների ուսումնասիրությունը:

Երկրորդ գլուխը՝ «Տուրիզմի լեզվի կիրառությունը որպես մասնագիտական դիսկուրս», ուսումնասիրում է տուրիզմի լեզուն որպես գործառական առանձին մասնագիտական դիսկուրս: Փորձ է արվում ներկայացնել տուրիզմի լեզվի բառային, շարահյուսական և ժանրային բնորոշ գծերը, որոնցով հիմնավորվում է նրա մասնագիտական բնույթը՝ դասելով այն անգլերենի համակարգում առկա այլ

մասնագիտական լեզուների շարքում: Հեղինակը կորպուսային վերլուծության է ենթարկում և համեմատում Հայաստանը և Մեծ Բրիտանիան ներկայացնող և գովազդող ուղեցույցներից կազմված կորպուսները՝ վեր հանելով բարձր հաճախականություն ունեցող հիմնաբառերն ու հանգուցային արտահայտությունները: Ներկայացված են կորպուսների նմանություններն ու տարբերությունները՝ համեմատական աղյուսակների միջոցով, ինչպես նաև հաստատված է տուրիզմի դիսկուրսի մասնագիտական բնույթը:

Երրորդ գլուխը՝ «Տուրիստական գովազդների և կարծիք-ակնարկների ռճագործատական բնութագիրը», ուսումնասիրում է տուրիստական գովազդների և տուրիստական բլոգներում զետեղված ուղեգրությունների լեզվական ու պատկերային դրսևորումները: Աշխատանքի այս մասում հեղինակը անդրադարձել է նաև գովազդի և պատմասության առնչություններին: Արտալեզվական գործոնների շարքում կարևորվել են ոչ միայն սոցիալ-մշակութային բնույթ ունեցող տարրերը, այլև որոշակի գունային, պատկերային, ձայնային հատկանիշներն ու որակները:

Հարկ է նշել, որ ատենախոսը կատարել է բավականին մեծ և լուրջ աշխատանք տուրիզմի դիսկուրսի ուսումնասիրության գործում: Տուրիզմի դիսկուրսը առանձնանում է ընդգծված տարբերակայնությամբ և տեքստային ու ժանրային առանձնահատկություններով: Այն յուրօրինակ ռճագործատական խոսքային դրսևորում է՝ հրապարակախոսական, գովազդային և համացանցային լեզվական տարրերի, գրավիչ պատկերների, հաճելի գույների և պատկերային այլ ձևերի կիրառության մի ամբողջական համալիր:

Ըստ էության ատենախոսը յուրովի զարգացրել և փաստացի տեքստային նյութի վրա ներկայացրել է տուրիզմի դիսկուրսի առանձնահատկությունները՝ բացահայտելով և մանրակրկիտ մեկնելով լեզվական, ռճական և գործատական որոշակի հատկանիշները:

Ուշագրավ է, որ ատենախոսը առանձնացրել և վեր է լուծել տուրիզմի դիսկուրսը ներկայացնող ժանրային տարատեսակները՝ բլոգ,

ճանապարհորդական բլոգ, տուրիստական սոցիալական կայքերում գետեղված կարծիք-ակնարկներ և դրանց պատասխան-արձագանքներ ու քննարկումներ:

Ատենախոսի կարևոր ձեռքբերումներից կարելի է համարել Մեծ Բրիտանիան և Հայաստանը ներկայացնող ուղեցույցների հիման վրա նոր կորպուսների (Guidebooks to Great Britain և Guidebooks to Armenia) ստեղծումը և դրանց նյութի վերլուծությունն ու համեմատությունը: Կորպուսային լեզվաբանությունը լեզվաբանության նորագույն ճյուղերից է և ժամանակակից ուսումնասիրության պահանջներից է հետազոտության ընթացքում կիրառել այն որպես գործիք:

Ուշադրության է արժանի ատենախոսի այն դիտարկումը, որ ըստ Մեծ Բրիտանիան և Հայաստանը ներկայացնող ուղեցույցների կորպուսային վերլուծության արդյունքների, տուրիզմի ոլորտում դիսկուրսի ձևավորման առումով Հայաստան բրենդը մասամբ է հետևում միջազգային տուրիզմի անգլալեզու դիսկուրսին բնորոշ լեզվական և արտալեզվական նորմերին և առայժմ զարգացման փուլում է՝ ի տարբերություն բրիտանական կորպուսի, որը երկրի մասին տեղեկատվություն հաղորդելուց բացի, հաջող կերպով կիրառում է մարկետինգային հնարքներ: Տվյալ եզրահանգումը կօգնի ոլորտի մասնագետներին հաշվի առնել դիսկուրսի առանձնահատկությունները՝ հայկական տուրիզմի խթանման գործում:

Ատենախոսությունը ինքնուրույն և կայացած ուսումնասիրություն է՝ հազեցած հանգամանակից և խորքային վերլուծություններով: Այն գրված է գրագետ և պատշաճ գիտական լեզվով, եզրերը, այդ թվում նաև նորաստեղծ եզրույթները տեղին են, դիպուկ գործածված: Սոնա Գուլյանը դրսևորել է իրեն որպես տուրիզմի անգլերեն և հայերեն դիսկուրսների զուգադրական վերլուծության առաջին հետազոտողներից մեկը և հուսով ենք կշարունակի իր հետազոտությունը՝ խորացնելով նշված ոլորտների միջգիտակարգային քննությունը:

Այժմ սեղմ կանգ առնենք որոշ նկատառումների վրա, որոնք պայմանավորված են աշխատանքը առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

- Կարծում ենք աշխատանքը կշահեր եթե երկու մշակույթների՝ հայկական և բրիտանական կորպուսային նյութը վերլուծելիս և համեմատելիս հեղինակը հաշվի առներ նաև այն հանգամանքը, որ հայկական կորպուսում ներառված անգլալեզու տեքստերը հիմնականում թարգմանություններ են, կամ ստեղծվել են ոչ լեզվակիրների կողմից, ի հակառակ բրիտանական տեքստերի: Այս պարագայում կարելի էր հաշվի առնել նաև անգլերենը որպես մայրենի (L1) և անգլերենը որպես օտար լեզվի (L2) գործածման առանձնահատկությունները:
- Քննելով տուրիստական բրենդի ձևավորման գործոնները գովազդներում հեղինակը էջ 111-112-ում անդրադառնում է GREAT Britain գովազդային շարքին, արդարացիորեն նշելով դրա դերը, գործառույթային նշանակությունը և ոճավորված բնույթը՝ ներկայացնելով այն չափազանցության ոճական հնարի օրինակ: Մինչդեռ կարծում ենք, որ օրինակը կարելի էր դիտարկել որպես համազիր բառախաղ GREAT բառի կիրառությամբ, ինչը միտված է անընդմեջ հիշեցնել բազմաթիվ ոլորտներում երկրի անվան և վեհության կապի մասին ոչ թե չափազանցության տեսանկյունից, այլ իբրև բառախաղ հիշեցում:

Վերը նշվածն ամեննին չի նվազեցնում ատենախոսի կատարած ուսումնասիրության արժանիքները: Նյութի պատկառելի ծավալով, իր միջգիտակարգային բնույթով և բովանդակությամբ, աշխատանքի վերլուծական ու զուգադրական մասի հազեցվածությամբ Սոնա Գուլյանի ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջները: Սեղմագիրը և ներկայացված տպագիր հոդվածները ևս համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Ասվածը հնարավորություն է տալիս միջնորդել Սոնա Արայի Գուլյանին՝ ԵՊՀ գործող ԲՈԿ-ի 009 մասնագիտական խորհրդին պաշտպանության ներկայացրած «Տուրիզմի դիսկուրսի լեզվական և արտալեզվական առանձնահատկությունները անգլալեզու կայքերում» թեմայով թեկնածուական ատենախոսության համար շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան:

Ատենախոսությունը համապատասխանում է սեղմագրին:


Ատենախոսությունը քննարկվել է, և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 2020 թվականի մայիսի 8-ի թիվ 7 նիստում՝ մ.գ.թ., դոցենտ Ս. Լուլուկյանի, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանի, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանի, բ. գ. թ. Ս. Կարապետյանի և բ. գ. թ. Ռ. Ասատրյանի մասնակցությամբ:

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի
պաշտոնակատար



մ.գ.թ., դոցենտ ՍԸԲՈՒՀԻ ԼՈՒԼՈՒԿՅԱՆ

Սրբուհի Լուսինյանի ստորագրությունը հաստատում եմ՝



ՀՊՄՀ գիտական տնօրենի պաշտոնակատար, դոցենտ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ



12-ը մայիսի, 2020թ.